ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ. ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Ռիչարդ Գիրագոսյան

Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնասիրություններն իրենցից ներկայացնում են 1915թ. դեպքերի տարբեր ասպեկտների խոր ու հանգամանորեն ներկայացմամբ ու պատմական նյութերով հարուստ աշխատություններ: Հատուկ ուշադրություն է դարձվում Հայոց ցեղասպանության դերին՝ որպես զանգվածային եղեռնագործության, ցեղասպանության և ողջակիզման երևույթների նախադեպի: Հայոց ցեղասպանության «միջազգայնացումը» ներկայացնելու և մեկնաբանելու խնդիրը շատ առումներով դրա կարևորությունը ցուցադրելու լավագույն միջոցն է: Հատկապես կարևոր են անցած իննսուն տարիները, որոնց ընթացքում անձնական հիշողությունները վերածվել են հավաքական պատմության:

Սակայն առկա է Հայոց ցեղասպանության նշանակությունն ու կարևորությունն ընդգծող մեկ այլ գործոն ևս: Չնայած բավական ժամանակ է անցել, բայց 1915թ. դեպքերը 2005-ին ևս չեն կորցրել իրենց արդիականությունը: Որքան էլ զարմանալի թվա՝ Թուրքիան ինքն է աջակցում, որպեսզի Հայոց ցեղասպանության հարցն առ այսօր պահպանի կենսունակությունն ու կարևորությունը, և միտումնավոր լռության մատնելով՝ հարցը բարձրացնում է ռազմավարական մակարդակի: Սա պայմանավորված է Թուրքիայի կառավարության կողմից պատմական փաստերը հերքելու քաղաքականությամբ: Չնայած այս ճիգերը նպաստում են պատմության սխալ վերծանմանը, սակայն միաժամանակ դրանք վերահաստատում և բարձրացնում են Հայոց ցեղասպանության ճանաչման կարևորությունը: Այսպիսով, ներկայիս Թուրքիայի համար ցեղասպանությունը չճանաչելը վերածվել է չլուծված խնդրի:

Հայոց ցեղասպանության միջազգայնացումը

2001թ. սեպտեմբերի 11-ի ողբերգությունն անսպասելիորեն կաթվածահար արեց համաշխարհային անվտանգությունը: Դրան հաջորդեց «ահաբեկչության դեմ պատերազմը», միջազգային համակարգում անսպասելի փոփոխություններին հետևեցին հետպատերազմյան աշխարհաքաղաքական սրընթաց փոփոխությունները: Սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետևանքները շարունակում են մեծ ազդեցություն ունենալ միջազգային հարաբերությունների վրա և բազմաբնույթ գործառույթներ են առաջադրում միջազգային իրավունքին:

Ռիչարդ Գիրագոսյան - վերլուծաբան, անվտանգության և հակահաբեկչական ուսումնասիրություններով զբաղվող «Abt Associates» կոորպորացիա, Վաշինգտոն:
Սույն հոդվածը լույս է տեսել Բեյրութի «Ազդակ» և Բոստոնի «Armenian weekly» օրաթերթերի հատուկ թողարկումներում (19.04.2005թ.):

Փոփոխությունների ենթարկվող միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի այս երկու նոր միտումները լայն հնարավորություններ են ստեղծում Հայոց ցեղասպանության հարցի վերարծարծման և «միջազգայնացման» համար։ Միևնույն ժամանակ, այս երկու միտումների խաչաձևումը նաև սպառնալիք է ներկայացնում Հայոց ցեղասպանության հարցը մոռացության մատնելու և այն միջազգային անվտանգության պահանջներին ու կարիքներին «զոհելու» առումով։

Միջազգային հարաբերություններն ահաբեկչության դարաշրջանում

Վտանգ կա, թե առկա սևեռուն ուշադրությունը միջազգային անվտանգության հանդեպ կարող է բարդացնել և ապագայում նույնիսկ խոչընդոտել ցեղասպանությունների արդյունավետ կանխարգելումը։ Այս վտանգը նախևառաջ պայմանավորված է ձևավորված դաշինքներում առկա միտումներից, նաև անվճռականորեն և կասկածանքով ինտեգրվող երկրների հետ մարտավարական համագործակցությամբ։ Ահաբեկչության դեմ պատերազմի մթնոլորտում դաշնակից դարձած երկրների շարքում կան այնպիսի վարչակարգեր, որոնք կարող են «միջազգային ահաբեկչության» սպառնալիքն օգտագործել որպես այլ էթնիկ խմբերի կամ փոքրամասնությունների դեմ իրականացվող իրենց գործողությունների արդարացում։ Գոյություն ունի էթնիկ հակամարտությունը կամ անգամ ցեղասպանությունն անվտանգության և կայունության քողի ներքո նորովի ներկայացնելու իրական հնարավորություն։

Ահաբեկչության մեր դարաշրջանում սպառնալիք է հանդիսանում նաև միջազգային նորմերի նկատմամբ դրսևորվող համառ անտարբերությունը։ Ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ը «ահաբեկչության դեմ պատերազմը» վարում է միակողմանիության և իր գերակայության վրա հիմնված մոտեցումներով։ Այն հակված է միջազգային անվտանգության հաստատություններին դիմել միայն անհրաժեշտության դեպքում և ամբարտավան կեցվածք է դրսևորում միջազգային իրավունքի նորմերի ու կոնվենցիաների (ինչպես, օրինակ, Ժնևի կոնվենցիայի) հանդեպ։

Միջազգային իրավունքին ենթարկվելու այսպիսի մոտեցման արդյունքում ստեղծված մթնոլորտն էր պատճառը, որ կտտանքների ենթարկվեցին Իրաքում ամերիկյան Աբու Գրեյբ բանտի բանտարկյալները, կամ ձևավորվեց «թշնամի զինվորի»՝ իբրև բռնակալի, կերպարը։ Ժնևյան կոնվենցիաների այնպիսի հակասական մեկնաբանությունը, ինչպիսին միջազգային ահաբեկչության դեմ կիրառվող «բարին ընդդեմ չարի» գաղափարախոսական մոտեցումն է, սպառնում է վերացնել սառը պատերազմից հետո միջազգային իրավունքի և անվտանգության ոլորտում մեծ դժվարությամբ ձեռք բերված հաջողությունները։ Այդ ամենի արդյունքում առաջացել են նաև իրավական «սև անցքեր», որոնցից մեկն է Գուանտանամոյի բանտի հետ կապված իրավիճակը, երբ ո՛չ դատավարություն է ընթանում, ո՛չ էլ բանտի անհայտ քանակությամբ բանտարկյալներին է շնորհվում ռազմագերիների կարգավիճակ։ Այս առումով իրոք անհանգստության տեղիք է տալիս Հայոց ցեղասպանության հարցը, որի միակ կարևորությունը միջազգային իրավունքին կամ արդարադատությանը ներկայացված աշխարհաքաղաքական չնչին արժեք ունեցող բողոքն է։

Նոր հնարավորություններ միջազգային իրավունքում

Միջազգային անվտանգության ամրապնդմանն ու պետության ղեկավարման գործում ռազմուժի դերի ընդարձակմանը զուգընթաց, վերջին տասնամյակը բնորոշվեց նաև միջազգային իրավունքի համակարգի հզորացմամբ: Ռուանդայում իրականացված ցեղասպանության և Բալկանների էթնիկ զտումների խնդիրներով զբաղվելու անհրաժեշտությունից ելնելով՝ ներկայիս միջազգային քրեական իրավունքի համակարգը նույնպես ինստիտուցիոնալացվել է 2002թ. նոր Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ, անգլ.՝ *International Criminal Court - ICC)* ստեղծմամբ: Ինստիտուցիոնալացվող իրավական համակարգում տեղի ունեցող գործընթացը կարևոր քայլ է միջազգային իրավունքի չափանիշներն ամրագրող արդյունավետ մարմինների ստեղծման ճանապարհին:

Միջազգային քրեական իրավունքի համակարգի զարգացումը մեր օրերին բնորոշ գործընթաց է: Ինչպես կարելի է տեսնել Հայոց ցեղասպանության պարագայում, այն գոյություն չուներ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ուստի ուսանելի է հետևել միջազգային քրեական իրավունքի զարգացմանը, քանի որ այն առաջարկում է մի քանի միտումներ, որոնք արտացոլում են Հայոց ցեղասպանության ճանաչման և հարցի վերարծարծման խնդրահարույց ընթացքը: Այն նաև բացահայտում է միջազգային իրավունքի լիովին քաղաքականացված գործընթացում առկա ռիսկը՝ կապված միջազգային արդարադատությունը հօգուտ միջազգային հարաբերությունների զոհաբերելու խնդրի հետ:

Միջազգային իրավունքի համակարգում նախադեպը նացիստական Գերմանիայի նախկին պաշտոնյաների և առաջնորդների՝ պատերազմից հետո տեղի ունեցած Նյուրնբերգյան դատավարությունն էր: Գործելով միջազգային զինվորական տրիբունալի չափորոշիչներին համապատասխան՝ Նյուրնբերգյան դատավարությունն իրականում քրեական գործընթաց էր, որի ուշադրության կենտրոնում էր ոչ թե ողջակիզումը (հոլոքոստ), այլ «Նացիստական Գերմանիան և ռազմականացման խնդիրը»[1]:

Չնայած Նյուրնբերգյան դատավարությունը սկզբնապես չկարողացավ հաստատել չարագործությունների մասին օրենքը, այնուամենայնիվ, այն ստեղծեց «ժամանակակից միջազգային իրավունքի կամ պատերազմական ոճիրների միջազգային դատարան»[2]: Սակայն միջազգային իրավունքը կյանքի կոչելու ինստիտուցիոնալացված մոտեցման այս առաջին քայլը խիստ սահմանափակ էր: Քաղաքական նպատակների գերակայությունը և արդարադատության ոլորտում կայունության ապահովմանը նախապատվություն տալը պարզ դրսևորվեցին Նյուրնբերգյան դատավարությունում, որտեղ մեղադրական վճիռ կայացվեց ընդամենը քսաներկու մեղադրյալների նկատմամբ, ինչպես նաև Ճապոնիայում՝ Հեռավորարևելյան Միջազգային զինվորական տրիբունալում (որն ավելի շատ հայտնի է Տոկիոյի տրիբունալ անունով): Օրինակ, 1953թ. Տոկիոյի տրիբունալի կողմից

[1] Douglas, Lawrence, The Memory of Judgment: Making Law and History in the Trials if the Holocaust. (Yale University Press: 2001), p. 93.
[2] Sands, Phillipe, Ed. From Nuremburg to the Hague: The Future of International Criminal Justice. (Cambridge University Press: 2003), p. 28.

դատապարտվածների մեծ մասն ազատ արձակվեց: Իսկ հաջորդ տարի պատերազմական հանցագործությունների համար դատապարտվածներից մեկը նշանակվեց Ճապոնիայի վարչապետ, մյուսը՝ արտգործնախարար:

Պատերազմից հետո ամբողջովին քաղաքականացված տրիբունալների երևան գալու հետ մեկտեղ՝ սառը պատերազմի աշխարհաքաղաքական օրակարգին համապատասխան, միջազգային իրավունքի զարգացող համակարգը երկրորդ պլան մղվեց: Որպես այդ ժամանակահատվածում չլուծված խնդրի օրինակ է Հայոց ցեղասպանությունը, որը «զոհաբերվեց» սառը պատերազմի պահանջներին: Մյուս կողմից՝ երբեք թույլ չի տրվել ստվեր նետել «օրինապահ դաշնակից Թուրքիայի» նկատմամբ Արևմուտքում ձևավորված կարծիքի վրա:

Միջազգային իրավունքի զարգացման նոր հեռանկարներ

Սառը պատերազմին հաջորդած դարաշրջանում հատուկ ուշադրություն դարձվեց միջազգային իրավունքի և անվտանգության կառույցների մեծ մասի վերանայմանը, ինչը նպաստեց ԵԱՀԿ ազդեցության աճին, փոփոխություն մտցրեց ՆԱՏՕ առաքելության և կառուցվածքի մեջ, հակադրություն առաջադրեց ընդլայնվող Եվրամիության կողմից: Ժողովրդավարությունն ու ազատ շուկան ավելի վեր դասվեցին աշխարհաքաղաքականության իդեալներից:

Միջազգային անվտանգության հետպատերազմյան փոփոխությունների մյուս կարևոր առանձնահատկությունը միջազգային իրավունքի վրա սևեռված ուշադրությունն էր: Այս համատեքստում փորձ արվեց սկսել գլոբալացված քրեական մի գործ՝ Բալկաններում արևմտյան անվտանգության հայեցակարգին և նախկին Խորհրդային Միությունում կայունությանը մարտահրավեր նետող «էթնիկ հակամարտություններին» ու «էթնիկ զտումներին» դիմագրավելու համար: Այս ժամանակահատվածում ծագած խնդիրներին համարժեք գնահատական տալու համար ստեղծվեց Միջազգային քրեական դատարան (ՄՔԴ, անգլ.՝ *International Criminal Court, ICC)*՝ որպես «միջազգային ամենալուրջ հանցանքները՝ ցեղասպանություն, մարդկության դեմ իրականացված ոճրագործություններ և պատերազմական հանցագործություններ, հետաքննելու և դատական կարգով հետապնդելու իրավասությամբ օժտված մշտական հաստատություն»[1]:

2005թ. մարտին 139 պետություններ ստորագրեցին, իսկ 97-ը դարձան Միջազգային քրեական դատարանի իրավասությունը հաստատող Հռոմեական ստատուտի (կանոնադրության - *Rome Statute)* անդամներ: Որքան էլ տարօրինակ է, Միացյալ Նահանգները հրաժարվեց միանալ ՄՔԴ-ին՝ հայտարարելով, թե իր ազգային շահերն ավելի լավ կպաշտպանվեն, եթե ամերիկյան զինծառայողները կամ պաշտոնյաները դուրս մնան ՄՔԴ-ից: Այս առանձնացումն ամրապնդվեց անձեռնմխելիության վերաբերյալ ավելի քան իննսուն բազմակողմանի պայմանագրերով և «ռազմուժի կարգավիճակին» առնչվող հա-

[1] Rome Statute on the International Criminal Court, United Nations Document A/CONF.183/9 (1998), http://www.un.org/law/icc/statute/romefra.htm

մաձայնագրերով, որոնք ապօրինի են համարում օտարերկրյա արդարադատության կիրառումը ամերիկյան զինվորականների նկատմամբ:

ՄՔԴ ստեղծմանը զուգահեռ, լայն տարածում ստացան նաև միջազգային հանցագործություններով զբաղվող մի շարք *ad-hoc (հատուկ այդ նպատակով ստեղծված - խմբ.)* դատարաններ ու տրիբունալներ: Այս դատարանների գործունեությունն ընդգրկում էր Կամբոջայում, Արևելյան Թիմորում, Կոսովոյում, Ռուանդայում, Սիերա Լիոնեում և նախկին Հարավսլավիայում իրականացված ոճրագործությունների դեպքերը: Սրանցից մի քանիսը ինքնավար միջազգային դատարաններ են, մյուսները կազմավորվել են ՄԱԿ և տեղի ազգային դատարանների համատեղ մասնակցությամբ՝ որպես խառը դատարաններ: Լեյլա Սադաթի խոսքերով, այս նոր հաստատությունների թվի ավելացումը թելադրում է միջազգային իրավունքի մի նոր «սահմանադրական մոտեցման» անհրաժեշտություն, որը գերիշխող դիրք ունի միջազգային քաղաքական կարգի նկատմամբ[1]: Միջազգային իրավունքի և անվտանգության միջև եղած այս կապն ակնհայտ է նաև Իրաքում գործող բացառիկ իրավական մարմնի՝ Հատուկ տրիբունալի պարագայում: Այն հետաքննում էր մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը Սադամ Հուսեյնի վարչակարգի օրոք, սակայն նաև իրավասու էր զբաղվել մարդկության դեմ գործված ոճրագործությունների, պատերազմական հանցագործությունների և ցեղասպանության հարցերով:

Միջազգային իրավունքը ինստիտուցիոնալացնելու միտումը չէր կարող զերծ մնալ քննադատությունից: Քննադատները հիմնականում ամերիկյան «իրատեսական» դպրոցի քաղաքագետներն են, որոնց մեջ կարելի է տեսնել նաև ԱՄՆ քաղաքական այնպիսի կարկառուն դեմքերի, ինչպիսիք են Ջորջ Քենանը և Հենրի Քիսինջերը: Նրանք պնդում են, որ միջազգային իրավունքը պետք է հանդես գա որպես համագործակցությանը նպաստող խորհրդատու և ոչ թե ղեկավարի ազգ-պետությունների միջև առկա հարաբերությունները: Միջազգային իրավունքի նկատմամբ ազգային շահի գերակայության գաղափարախոսությունը, համակցված ԱՄՆ-ի կողմից միակողմանի արտոնյալ իրավունք պահպանելու կեցվածքով, միջազգային համակարգը դնում է դժվարության առջև:

Ազգային իրավունքի նոր հեռանկարներ

Վերջին տարիներին միջազգային իրավունքն ընդարձակել և ամրապնդել է գործունեության ոլորտը: Դրա հետ կապված՝ մեծացել է նաև ազգային դատարանների գործունեության շրջանակը: Ազգային դատարաններն ավելի ու ավելի հաճախ են «դիմում համաշխարհային արդարադատության սկզբունքներին»՝ ներառելով այնպիսի դեպքեր, ինչպիսիք են «արդարադատության հաստատումն օտարերկրացիների նկատմամբ մարդու իրավունքների ոտնահարման դեպքերում»[2]:

[1] Sadat, Leila, The International Criminal Court and the Transformation of International Law: Justice for the New Millennium (Transnational Publishers: 2002), p.1.
[2] Ibid, p. 130.

Ամենահայտնի օրինակներից մեկը իսպանական դատարանի պահանջն էր Չիլիի նախկին առաջնորդ, գեներալ Ավգուստո Պինոչետի գործը քննելու վերաբերյալ: Մինչ Պինոչետը բուժվում էր Մեծ Բրիտանիայում, իսպանական դատարանը փորձում էր գործի առնչությամբ հաստատել իր իրավասությունը: 1998թ. հոկտեմբերին իսպանական դատարանի կողմից Պինոչետի դեմ դատական գործ հարուցելը հիմնված էր Չիլիում 1973թ. սեպտեմբերից մինչև 1998թ. մարտը (Պինոչետի ղեկավարության ժամանակաշրջանը) մարդու իրավունքների ոտնահարման փաստերի վրա:

Պինոչետի դատավարությունը միջազգային իրավունքի և արդարադատության ոլորտում նոր և բավական լուրջ հարցեր բարձրացրեց, որոնք առնչվում են, մասնավորապես, ինքնիշխանության ու անձեռնմխելիության սկզբունքներին: Արծարծված հիմնական իրավական խնդիրն այն էր, թե արդյոք, ըստ միջազգային իրավունքի, պետության ղեկավարը (թե՛ ներկայիս, թե՛ նախկին) այլ երկրների դատական ատյաններում պահպանում է լիակատար անձեռնմխելիություն: Պինոչետի դատավարության ընթացքում ծագեցին նաև դատավարության վայրի և արդարադատության հետ կապված որոշ երկրորդական խնդիրներ, ինչը միջազգային իրավունքի համատեքստում մեկ անգամ ևս վկայում էր ազգային դատարանների աճող դերի մասին: Սա մարդու միջազգային իրավունքների ոտնահարման և ցեղասպանության դեպքերում արդարադատություն հաստատելու ևս մի նոր հնարավորություն էր ստեղծում:

Ընդլայնվող արդարադատություն

Ավելի ուշ արդարադատության ընդլայնման դրսևորումներից մեկն էլ Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ, անգլ.՝ *International Court of Justice, ICJ)* 2002թ. որոշումն էր բելգիական դատական մարմինների կողմից Կոնգոյի պետնախարարին ներկայացված ձերբակալման հրամանագրի օրինականության վերաբերյալ: ԱՄԴ-ն որոշել էր, որ սովորույթի ներքին իրավունքի մաս կազմող պաշտոնական անձեռնմխելիության իրավունքը սահմանափակում էր օտարերկրյա դատարանի հնարավորությունները՝ օրենքով հետապնդել մեկ ուրիշ պետության՝ մարդու իրավունքները ոտնահարող ղեկավարին: ՄՔԴ-ի, Ռուանդայում ու նախկին Հարավսլավիայում կատարված ոճրագործությունների հարցերով զբաղվող տրիբունալների որոշումների համաձայն, ըստ վերջին տարիներին սովորույթի միջազգային իրավունքի՝ պաշտոնական անձեռնմխելիության շնորհիվ հաջողությամբ թաքնվելու հնարավորությունները զգալիորեն սահմանափակվել են և նույնիսկ, կարելի է ասել, վերացել[1]:

Միջազգային քրեական դատարանի և ազգային դատարանների միջև առկա՝ արդարադատությանն առնչվող հարցերի մեկնաբանությունը թելադրում է զբաղվել կոմպլեմենտարության հայեցակարգով առաջնորդվող այնպիսի *ex post (լատ.՝ փաստացի, տեղի ունեցած - խմբ.)* դատական գործերով, որոնք թույլ են տալիս ՄՔԴ արդարադատությունը կիրա-

[1] Sands, (2003), pp. 89-102, 108.

ռել միայն այն դեպքում, երբ ազգային դատարանները չեն կարող կամ ի վիճակի չեն իրականացնել հետաքննություն կամ դատական հետապնդում: Զարգացող արդարադատության մասին է վկայում նաև *Alien Tort Statute-ին (Օտարերկրացիների քաղաքացիական իրավունքների խախտման մասին ստատուտ - խմբ.)* վերաբերող ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումը: 2004թ. վերջին ընդունված որոշման համաձայն, Գերագույն դատարանը հրապարակեց միջազգային իրավունքին դիմելու նպատակահարմարության մասին հատուկ վճիռ *(Sosa v. Alvarez-Machain):* Այսպես, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի համար կարևոր է ոչ այնքան բուն հետաքննությունը, այլ Գերագույն մարմնի որոշման համաձայն նշված իրավական մարմնի կողմից գործը քննելու փաստը:

Օտարերկրացիների քաղաքացիական իրավունքների խախտման մասին ստատուտ (The Alien Tort Statute)

ԱՄՆ դաշնային և միջազգային իրավունքների համընկնման (կոնվերգենցիայի) կարևոր օրինակներից մեկը քիչ հայտնի *Alien Tort Statute-ն* է, որը նաև ճանաչված է որպես Օտարերկրացիների քաղաքացիական իրավունքների խախտման վերաբերյալ բողոքների օրենսդրական ակտ *(Alien Tort Claims Act):* Այն օրենքի ուժ է ստացել ԱՄՆ Կոնգրեսի առաջին նիստում վավերացվելուց հետո՝ որպես 1789թ. Դատական ակտի մի մաս, որը հիմք դրեց ԱՄՆ դաշնային դատական համակարգին: Հիմնադրվելուց հետո մոտ երկու հարյուր տարի այն չի գործել և միայն մեկ անգամ կիրառվել է մի դատավարության ժամանակ: Այս օրենսդրական ակտը ԱՄՆ դաշնային իշխանություններին թույլ է տալիս «իրական արդարադատություն հաստատել ազգերի իրավունքների ոտնահարման յուրաքանչյուր գործողության դեպքում»[1]:

Alien Tort Statute-ին հղում չի արվել մինչև 1980թ. դատական գործը *(Filartiga v. Pena-Irala).* պարագվայցի մի խումբ քաղաքացիներ իրենց երկրի նախկին պետական պաշտոնյաների դեմ քաղաքացիական հայց ներկայացրին վերաքննիչ դատարան՝ վնասների փոխհատուցման պահանջով: Դատարանը նախ լսեց դատական գործը և հաստատեց, որ կտտանքները սովորույթի միջազգային իրավունքի ոտնահարում են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ *Alien Tort Statute-ը* արդարադատություն է իրականացնում՝ ելնելով այն փաստից, որ դատական գործը «հարուցվել է արտասահմանցու կողմից» (ով կարծում է, թե «ոտնահարվել է ազգերի իրավունքը»): Այնուհետև սկսվեց դատական գործը, քանի որ այդ նույն դատարանը «համընդհանուր դաշնային իրավունքի մի մաս» համարեց միջազգային իրավունքը[2]:

Այս դատավարությունն օտարերկրացիներին հնարավորություն ընձեռեց ուղղումներ մտցնել օտար կառավարությունների կողմից իրենց իրավունքների չարաշահման դատական գործերում: Հետագայում *Filartiga v. Pena-Irala-ի* դատական գործն օգտագործվեց ընդդեմ Զիմբաբվեի ներկայիս նախագահի, Ֆիլիպինների նախկին նախագահի, Չինաստանի նախկին վարչապետի, ինչպես նաև Գվատեմալայի, Եթովպիայի և Նիգերիայի

[1] 28 U.S.C § 1350.
[2] 630 F.2d 876 (2d Cir. 1980).

նախկին ռազմական առաջնորդների դեմ հարուցված դատական գործերում[1]: *Alien Tort Statute-ի* հիման վրա ընդունված դատավճիռները հետագայում տարածվեցին նաև մարդու իրավունքները և շրջակա միջավայրի պահպանության սկզբունքները ոտնահարող արտասահմանյան և ամերիկյան ընկերությունների դատական գործերի վրա[2]:

Alien Tort Statute-ի տարածումն իր ազդեցությունն ունեցավ Գերագույն դատարանի *(ԱՄՆ Գերագույն դատարան - խմբ.)* 2004թ. կայացրած որոշման վրա: *Sosa v. Alvarez-Machain-ի* դատական գործի առնչությամբ կայացված որոշման հիման վրա Գերագույն դատարանը մերժեց սովորույթի միջազգային իրավունքի մաս կազմող «մեծածախ առևտրի անկախ կորպորացիաների» սկզբունքները ԱՄՆ իրավունքում՝ որպես համընդհանուր դաշնային իրավունքի մաս հաստատելու *Alien Tort Statute-ի* հիման վրա ներկայացված փաստարկը՝ այն համարելով «ոչ ծանրակշիռ և անհնար»[3]:

Գերագույն դատարանի որոշումն արդարադատության ոլորտում հանդուրժողականության մթնոլորտ ստեղծեց և որոշակի ճկունություն մտցրեց «ազգերի իրավունքի դեմ» կատարված ոճրագործություններին առնչվող հետագա դատական գործերում, որոնք վերաբերում են ճանաչված, բայց փոքրաթիվ ենթախմբերին: Այս ոճրագործություններն ընդգրկում են երեք հիմնական ոլորտ՝ դեսպանների դեմ ուղղված մահափորձեր, անվտանգ երթևեկության խախտումներ և ավազակություններ: Որքան էլ զավեշտալի է՝ ծանր հանցագործությունների, այդ թվում և ցեղասպանության դատական հետապնդումը դասվում է երրորդ՝ ավազակության ոլորտին:

Ավազակությունն առնչվում է ցեղասպանության հետ այնքանով, որքանով որ, ըստ իրավական բացատրության, համարվում է ժամանակակից մարդու իրավունքների խիստ կոպիտ ոտնահարում: Ավազակությունը միակ միջազգային իրավական հանցագործությունն է, որը համարվում է և՛ համընդհանուր իրավունքի, և՛ ազգերի իրավունքի խախտում[4]: Իրավական ճանաչման նոր միջազգային նորմերի համար ծառայելով որպես չափորոշիչ՝ ավազակությունն իրավաբանական տեսանկյունից դասվում է արտերկրյա (և վերազգային) ահաբեկչության, այլ չարագործությունների և ցեղասպանության շարքին:

Ցեղասպանության ընդհանուր բնորոշիչները. գաղափարախոսություն և աշխարհագրություն

Ցեղասպանության կանխարգելմանը փորձերն ամենուր անարդյունավետ են: Ցեղասպանությամբ արտահայտվող զանգվածային չարագործությունները, էթնիկ զտումներն ու փոքրամասնությունների դեմ կատարված հանցագործությունները կամ ռասայական բռնություններն ընդհանուր գծեր ունեն: Դրանք առկա են գաղափարախոսությունից սկսած մինչև աշխարհագրական ընդգրկումներ և արտահայտվում են բռնությունների ու

[1] Kontorovich, Eugene, Implementing Sosa v. Alvarez-Machain: What Piracy teaches About the Limits of the Alien Tort Statute, *Notre Dame Law Review*, Vol. 88, November 2004, p. 8.
[2] Ibid, pp. 8-9.
[3] Ibid, p.2.
[4] Ibid, p.4.

սպանությունների միջոցով: Հաճախ փորձ է արվում ցեղասպանությունն արդարացնել ծայրահեղ ազգայնականությամբ և ավելի հաճախ ի հայտ է գալիս թույլ իշխանություններ ունեցող, այսինքն՝ «չկայացած երկրներում»: Միջազգային իրավունքի դրույթներում բարբարոսությունները դիտվում են որպես «հանցագործություններ միջազգային հանրության դեմ» և միջազգային իրավունքում ստեղծում են մի նոր կարևոր ճյուղ, որը հայտնի է «Օրենք ոճրագործության մասին»[1] անվամբ:

Ե՛վ գաղափարական, և՛ աշխարհագրական առումով ցեղասպանությունը սահմաններ չի ճանաչում: Այն հաճախ իրականացվում է հարևան երկրներում, այդ ոճրագործության հիմքում թաքնված ատելությունը սահմաններ չունի: Ավելին, բոլոր ցեղասպանությունների հիմքում ընկած է մեկ այլ գործոն ևս. միջազգային հանրությունը չի ցանկանում քաղաքական միջամտություն ցուցաբերել կամ նույնիսկ դիմակայել ցեղասպանությանը: Այսպիսով, ցեղասպանությունը, էթնիկ զտումներն ու փոքրամասնությունների դեմ ուղղված համընդհանուր բռնությունները բխում են ծայրահեղ ազգայնականությամբ պայմանավորվող ատելությունից: Կարելի է ցեղասպանությունների փոխկապակցվածություն տեսնել հայերի, բոսնիացիների, կամբոջացիների, հրեաների, քրդերի, ինչպես նաև ցեղասպանության զոհ դարձած այլ ազգերին առնչվող դեպքերի միջև:

Միևնույն ժամանակ, ցեղասպանության յուրաքանչյուր դեպք բացառիկ է՝ իր ունեցած ժողովրդագրական, տնտեսական, քաղաքական հետևանքների առումով: Հարկ է անհրաժեշտ ձևով արձագանքել ցեղասպանությանը թե՛ այդ գործողության ընթացքում և թե՛ դրանից հետո: Չհարթված գործոնները հաճախ խանգարում են ցեղասպանությանը հաջորդող փուլում հարաբերությունների կարգավորմանը: Հայոց ցեղասպանության դեպքում հարաբերությունների կարգավորման ամենամեծ խոչընդոտը ժխտման քաղաքականությունն է և ոճրագործների պատմական ռևիզիոնիզմը:

Զուգահեռներ Ռուանդայի հետ

Ռուանդայում իրականացված ցեղասպանությունը վկայում է այն մասին, թե ինչ ցածր մակարդակի վրա է գտնվում այսօր մարդկության դեմ իրականացվող ոճրագործությունների կանխման համակարգը: Ցուցաբերելով կատարյալ անգործություն և անտարբերություն՝ Միացյալ Նահանգները ազգերի դեմ իրականացվող ոճրագործություններն ու ցեղասպանությունը կանխելու երկչոտության դրսևորման վառ օրինակ է հանդիսանում: Չնայած միայն ԱՄՆ-ը չէր, որ չարձագանքեց ցեղասպանությանը, սակայն այդ երկիրը չկատարեց միջազգային հանրության առաջատարի իր դերը: ԱՄՆ անտարբերությանն անդրադարձել է Սամանտա Փաուերը 2002թ. հրատարակած իր հանրահայտ «Դժոխային հիմնախնդիրներ. Ամերիկան և ցեղասպանության դարաշրջանը» գրքում, որը սկսվում է Հայոց ցեղասպանության պատմությամբ[2]:

[1] Drumbl, Mark, Collective Violence and Individual Punishment: The Criminality of Mass Atrocity, *Northwestern Law Review*, Vol. 99, No. 2, 2005, p. 540.
[2] Power, Samantha, *A Problem from Hell: America and the Age of Genocide* (Basic Books: 2002), pp. 1-20.

Ռուանդայի ցեղասպանությունը կարոտ է դատապարտման: 1994թ. ապրիլ-հունիսին, Ռուանդայում իրականացված ցեղասպանության արդյունքում, հուտու էթնիկ ցեղախմբի ծայրահեղական տարրերի կողմից առաջնորդվող կառավարությունը, թիրախ ունենալով էթնիկ թութսիներին, բնաջնջեց մոտ 800.000 ռուանդացիների կամ մոտավոր հաշվարկներով՝ բնակչության 10%-ը:

Ազգային ատելությունը և դրա դրդապատճառները

Ցեղասպանությունը և զանգվածային կոտորածները պատահականորեն չեն բռնկվում, դրանք նախօրոք կազմակերպվում են, ուղղորդվում և իրականացվում: Կա նաև անհանգստություն պատճառող մեկ այլ կարևոր նախապայման, որն առավել հաճախ արտահայտվում է «ատելություն ներշնչող քարոզչությամբ», ինչն, իր հերթին, «հրեշային կերպարանք է հաղորդում և մարդկային որակներից զրկում է» որոշակի մարդկանց կամ մարդկանց խմբի: Այսպիսի դեպքերում կարող են կիրառվել նաև ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչպես, օրինակ, Ռուանդայում ռադիոյի և Բալկաններում բջջային հեռախոսների կիրառումը իրականացված հարձակումները համակարգելու համար:

Չնայած ոչ այնքան համոզիչ և բացահայտ, սակայն Թուրքիայի ռևիզիոնիստական և ժխտման քաղաքականությունը նույնպես ձևավորում է հենց նմանատիպ «խմբային ատելություն», ինչը նպատակ ունի Հայոց ցեղասպանությունը ներկայացնել որպես թուրքական կառավարության դեմ հարձակման հետևանք: Վերջինս հակված է չափազանցնել «հայերից բխող վտանգը» և իր շահերին ծառայեցնել սպառնալիքի ընդհանուր զգացողությունը:

Նման կայուն հակահայկական տրամադրությունները շատ առումներով ամենալուրջ երկարաժամկետ խոչընդոտներից են, որոնք Թուրքիային թույլ չեն տալիս ընդունել Հայոց ցեղասպանության փաստը:

Միջազգային հանրության անհամարժեք պատասխանը

Խիստ մտահոգիչ էր այն, որ միջազգային հանրությունն անհապաղ չարձագանքեց Ռուանդայի ցեղասպանությանը և անհրաժեշտ քայլեր չձեռնարկեց: Ճգնաժամային իրավիճակներում միջազգային հանրությունը դառնում է կրավորական: Իրականում միջազգային հանրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ազգ-պետություններից կազմված խառը մի խումբ, որտեղ յուրաքանչյուրն իր ազգային շահերն է հետապնդում և առավել հաճախ այլ ազգերի հետ մրցակցում է, քան համագործակցում: Այսպիսով, Ռուանդայի ցեղասպանությանը չարձագանքելը միջազգային հանրության պարտությունն էր: Սառը պատերազմին հաջորդող ժամանակահատվածում Միացյալ Նահանգներն ավելի ընդգծված սխալներ է թույլ տալիս: ԱՄՆ անտարբերությունը Ռուանդայի ցեղասպանության նկատմամբ իր արտացոլումը գտավ Հայոց ցեղասպանության հարցին ունեցած նրա վերաբերմունքում: ԱՄՆ պետքարտուղարությունը Ռուանդայի ցեղասպանությանն արձագանքեց անվճռականությամբ և քաղաքական երկչոտությամբ: Այս դիվանագիտությունը շարունակվում է

նաև Հայոց ցեղասպանության պարագայում: Երկու դեպքում էլ ԱՄՆ-ին չհաջողվեց համաձայնության գալ կամ նույնիսկ ընդունել ցեղասպանության փաստը: ԱՄՆ-ը չի ցանկանում ճանաչել Ռուանդայի ցեղասպանությունը, քանի որ այդ քայլով բարոյական պատասխանատվություն կկրի դրա համար: Իսկ Հայոց ցեղասպանության պարագայում Միացյալ Նահանգները նախապատվությունը տալիս է Թուրքիային՝ պատմական իրողությունն ընդունելու փոխարեն:

Ռուանդայի ցեղասպանության դատապարտումը

Ռուանդայի ցեղասպանությունից չորս ամիս անց ՄԱԿ Անվտանգության խորհուրդը ստեղծեց Ռուանդայի հարցով Միջազգային քրեական դատարան (ՌՄՔԴ, անգլ.՝ *International Criminal Tribunal for Rwanda, ICTR):* Վերջինս հետաքննելու և դատական կարգով հետապնդելու էր «1994թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը Ռուանդայի տարածքում իրականացված ցեղասպանության և մարդու միջազգային իրավունքների լուրջ ոտնահարումների, ինչպես նաև Ռուանդայի հարևան երկրներում ցեղասպանության ու նմանատիպ բռնությունների համար պատասխանատու անձանց և Ռուանդայի քաղաքացիներին»[1]:

ՌՄՔԴ ամենակարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ այդ դատարանը խմբով իրականացված գործողությունների շրջանակներում առանձնացրեց անհատական հանցագործությունները: «Խմբային պատժամիջոց» հասկացությունը կոլեկտիվ մեղքի տարր է պարունակում, և միջազգային քրեական դատարանը ցեղասպանությունների ու զանգվածային չարագործությունների մեղավոր է ճանաչում ողջ հանցավոր խմբին՝ ի դեմս որևիցե պետության կամ կոնկրետ էթնիկ, ռասայական, կրոնական կամ քաղաքական խմբի[2]: Սակայն գոյություն ունի նաև խմբային պատժամիջոցի առավել խոր հասկացություն, որը բխում է ոչ թե *կոլեկտիվ մեղքից*, այլ *կոլեկտիվ մեղավորությունից:* Իրավաբանության պրոֆեսոր Մարկ Դրամբլը խորհուրդ է տալիս վերանայել և ընդունել խմբային պատժամիջոցի այս հասկացությունը: Նա կարծում է, որ «զոհերին պետք է դիտել որպես անհատ, իսկ ագրեսորներին՝ որպես կոլեկտիվ (դրան հակառակ՝ միջազգային քրեական դատարանը զոհերին դիտում է կոլեկտիվ, իսկ զավթիչներին՝ անհատական կտրվածքով)»[3]:

Սա հատկապես հարմար է Հայոց ցեղասպանությունը դատապարտելիս, քանի որ հարմար միջոց է ոչ միայն ցեղասպանությանն ակտիվ կամ պասիվ մասնակցությունը խարանելու համար, այլ նաև զոհերին «հատուցելու» հնարավորություն է ստեղծում, մի բան, որը բացակայում է պատժիչ քրեական դատարանների համակարգերում: Ըստ Դրամբլի, այս մոտեցումը «կոլեկտիվ պատժամիջոցի կառույց կստեղծի կոլեկտիվ պատասխանատվության գաղափարի շուրջ, որը տարբերվում է կոլեկտիվ մեղքից, մեղադրանքից կամ մեղավորությունից»[4]:

[1] United Nations Security Council Resolution 955, 49th Session, UN Doc. S/RES/955 (1994).
[2] Drumbl, Mark, Pluralizing International Criminal Justice, *Michigan Law Review*, Vol. 103, 2005, pp. 120-121.
[3] Ibid, p. 121.
[4] Ibid, p. 212-122.

Հայոց ցեղասպանության դասերը. նոր դեղամիջոցներ

Հայոց ցեղասպանության պարագայում տվյալ դեպքին հատուկ միջոցներ կիրառելու հնարավորություն է ստեղծվում, որը վաղեմության ժամկետ չունի և հաշվի չի առնում հանցագործների ֆիզիկական բացակայությունը: Ավելին, կոլեկտիվ պատասխանատվությունը ենթադրում է մի շարք նորացված, «զոհերի հիշատակին տուրք մատուցող և փոխհատուցման մասին մոտեցումներ», որոնք համապատասխանում են Հայոց ցեղասպանության հարցում անհրաժեշտ արդարադատության իրականացման նվազագույն չափանիշներին[1]: Հայոց ցեղասպանության փոխհատուցմանը վերաբերող խնդիրներից մեկը «պենոլոգիական արդարացում» (անգլ.՝ *«penological justification»)* հասկացությունն է: Ցեղասպանության և չարագործությունների դեպքերում առկա են պատժի նպատակահարմարությունը որոշող երկու հիմնական տարրեր: Առաջին տարրը պատիժն է, որի համաձայն՝ որպես պատժամիջոց տուրքի սահմանումը բարոյական հավասարակշռություն է ստեղծում այնքան ժամանակ, քանի դեռ այն արդար է և համապատասխանում է հանցանքի լրջությանը: Երկրորդ տարրը կանխարգելումն է, ինչը շատ ավելի հեռատեսական է և եղեռնագործներին դատական կերպով հետապնդելն ու համապատասխան պատժամիջոցներ սահմանելը դիտում է որպես ապագայում նման գործողություններ իրականացնել ցանկացողներին զսպելու կամ տարհամոզելու միջոց:

Քանի որ Հայոց ցեղասպանությունից ի վեր շատ ժամանակ է անցել և ոճրագործները ֆիզիկական պատասխանատվության չեն կարող ենթարկվել, ապա պատժամիջոց հասկացության առնչությամբ ծագում է մեկ ուրիշ խնդիր: Առաջին տարրը՝ պատիժը, միանգամայն թույլ իրավական հիմքեր ունի, մինչդեռ երկրորդ տարրը՝ կանխարգելումը, շատ ավելի լուրջ քննարկման առարկա է: Հայոց ցեղասպանության դատապարտումը կանխարգելման տեսանկյունից առաջ է քաշում մի շարք կարևոր խնդիրներ, որոնք առաջարկում են արդյունավետ փոխհատուցում և իրավունքների վերականգնման ու հաշտության հնարավոր միջոցներ:

ՄԱԿ-ի կողմից լիազորված տրիբունալի կամ «Ճշմարտության հանձնաժողովի» (անգլ.՝ «*Truth Commission»)* գլխավոր նպատակն է իրականացնել Արևելյան Թիմորի դեպքերի դատավարությունը: Այն փորձում է դատավարությունն անցկացնել և պատիժներ սահմանել ինչպես հաշտեցման գործին նպաստելու, այնպես էլ արդարություն հաստատելու ուղղությամբ: Ինչպես ցույց են տվել Լատինական Ամերիկայի վեց երկրներում և Աֆրիկայի չորս երկրներում քաղաքացիական հակամարտությունների և դրանց կարգավորման ուսումնասիրությունները, ընթանում է հասարակության ամոքման գործընթաց՝ «ներման միջոցով, ինչն արտահայտվում է ճշմարտությունն ասելով, մասնակի արդարություն և նոր հարաբերություններ հաստատելու պահանջով»[2]:

Իրավագիտության պրոֆեսոր Հիլարի Ջոզեֆսն (Սիրակուզա) ուսումնասիրել է նաև

[1] Ibid, p. 122.
[2] Long, William and Peter Brecke, *War and Reconciliation* (MIT Press: 2003), p.3.

ներում հայցելու նշանակությունը միջազգային համեմատական համատեքստում[1]: Իր վերլուծություններում Ջոզեֆսն օգտագործել է օրենքի միջոցով հակամարտությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու մասին (Ճապոնիայի և Միացյալ Նահանգների օրինակով) Հիրոշի Վագացումայի և Արթուր Ռոսետի աշխատությունները[2]: Նա նշել է նաև, որ «առկա են հաշտեցման տարբեր եղանակներ (մոդալություններ)»[3]: Հետագայում այս գաղափարն ավելի է զարգանում Ջանա Թոմսոնի աշխատությունում: Նա փոխհատուցումը համարում է հարաբերությունների վերականգնման միջոց և այն կարծիքին է, որ այնպիսի խորհրդանշական գործողություն, ինչպիսին է ներում հայցելը, չի կարելի համարել փոխհատուցում: Այն չի կարող վերադարձնել զոհվածներին կամ մեղմել տառապանքները: Սակայն ընդունելով անցյալի սխալը՝ նրանք ազգերին կամ անհատներին հնարավորություն կտան վերականգնել փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները[4]:

Իհարկե, ես ամենևին էլ նկատի չունեմ, որ ցեղասպանության նման ոճրագործությունը կարող է մեղմվել ներում հայցելով: Խնդիրը փոխհատուցումն է և այդ հարցի նկատմամբ ավելի ճկուն մոտեցում ցուցաբերելը: Հայոց ցեղասպանության պարագայում սա վերաբերում է փոխհատուցման, ինչպես նաև հաշտեցման ու հարաբերությունների վերականգնման չլուծված պահանջներին: Սակայն Հայոց ցեղասպանությանն առնչվող իրատեսական արդարությունը «չի կարող աչք փակել» ժողովրդագրական և աշխարհագրական փոփոխությունների վրա, որոնք ժամանակի ընթացքում միաձուլվել են:

Կարելի է վիճել, թե դատական գործընթացն ավելի կարևոր է, քան դատավճիռը: Հնարավոր է նաև, որ սա միակ եղանակն է, որով միջազգային իրավունքը կարող է պատժել անհատներին՝ պետության կողմից իրականացված գործողությունների համար[5]: Այս գործընթացը արդյունավետ կերպով պետությունը փոխարինում է անհատով՝ որպես միջազգային իրավունքի ավանդական սուբյեկտ: Սակայն Հայոց ցեղասպանության պարագայում՝ անհատներին մեղադրելու իրավական միջոցների բացակայության պայմաններում, իրավական դիրքորոշումը պայմանավորված է երկրի, տվյալ դեպքում՝ «ժառանգորդ երկիր» համարվող Թուրքիայի պատասխանատվությամբ: Այսպիսով, ապագայի մասին մտահոգվելուց առաջ Թուրքիան, որպես ժառանգորդ երկիր, պարտադիր կերպով պետք է ընդունի անցյալի բեռը:

[1] Josephs, Hilary, The Remedy of Apology in Comparative and International Law: Self-Healing and Reconciliation, *Emory International Law Review*, Vol. 18, 2004.
[2] Wagatsuma, Hiroshi and Arthur Rossett, The Implications of Apology: Law and Culture in Japan and the United States, *Law & Society Review*, Vol. 20, 1986.
[3] Josephs (2004), p.60.
[4] Thompson, Jenna, *Taking Responsibility for the Past: Reparation and Historical Justice* (Polity Books: 2002), pp. 47-50, cited in Josephs (2004).
[5] Weitz, Eric, *A Century of Genocide: Utopias of Race and Nation*. (Princeton University Press: 2003), Weitz also contends that genocide is organized by states but is only implemented through popular participation.